ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀՌՑ-ԳՀԾՁԲ-18/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով «ՀՀՌՑ» ՓԲ ընկերության Երևանի Հ=308մ հեռուստաաշտարակի մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման և ներկման աշխատանքների որակի և տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերման հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 10.07.2018թ. ժամը 10.00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ **Գ. Խաչատրյանը**

Անդամներ՝ **Լ. Ոսկանյանը**
Հ. Հարությունյանը
Ս. Պետրոսյանը
Ս. Դավթյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ **Մ. Նիկոլյանը**

1. **Ի գիտություն** Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով, հաշվի առնելով վերոգրյալը՝ նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով և «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ ՍՊ ընկերությանը ծանուցվել է մինչև ս.թ. հուլիսի 9-ը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

2, Հանձնաժողովն արձանագրեց.

ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ ՍՊ ընկերության կողմից 09.07.2018-ին ներկայացվել է 27.06.2018թ. կնքված Աշխատողի աշխատանքային թիվ 1/2018 պայմանագիրը /պայմանագիր կցվում է/: Պայմանագրի 2 կետով սահմանված է աշխատաժամանակի տևողություն, շաբաթական 10 /տասը/ ժամ, որի տակ ենթադրվում է օրական 2-ական աշխատանքային ժամ, ինչը հակասում է ՀՀՌՑ-ԳՀԾՁԲ-18/20 ծածկագրով հրավերի պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագրի 2.5.14 կետով նախատեսված պարտադիր պայմանին:

3. Հանձնաժողովը որոշեց.

3.1 Ղեկավարվելով Կարգի 48-րդ կետով՝ ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ ՍՊ ընկերության կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ չշտկելու հիմքով մերժել հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ ԳՐԻՏԻԳ ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

3.2 Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ ԳՐԻՏԻԳ ՍՊ ընկերության՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

3.3 Հաջորդ նիստը հրավիրել ս.թ. հուլիսի 17-ին, ժամը 15.00-ին, ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Գ. Խաչատրյան

անդամներ՝ _____ Լ. Ոսկանյան

_____ Հ. Հարությունյան

_____ Ս. Պետրոսյան

_____ Ս. Դավթյան

քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյան